

ԱՐԴԻ ՇԻՐԱԿԱՑԻՔ ԲՈՒՄԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Յայտնի է թէ յետ այնքան աշխարհաւեր և վատաբախտիկ յեղափոխութեանց՝ որ եկան մեր բնիկ աշխարհին ամբողջութեան վրայ, կարելի չէ ըսել որ արդի Բուսաց բաժնի Շիրակացիք՝ բուն հին Շիրակայ բնակչաց յաջորդք ըլլան, մինչդեռ անոնց գաղթելն մեզի մօտ ժամանակներս եղած է։ Արդի շիրակաբնակք՝ այլ և այլ քաղաքաց և տեղեաց և գաւառաց խառնուրդք են. թուփրագգալացի կայ, Հասանդալացի, թուփրացի, Մշեցի, Խարբերդցի, Բասենցի. բայց ամենէն բազմաթիւք Բագրևանդացիք են Արարատեան հին գաւառէն, Ալաշկերտ աւանէն և Գիւլլու կոչուած գեղէն. և թէպէտ կիսադարեան քաղաքակցութեամբ ու ազգախառնութեամբ զանգուեր են իրարու հետ, մասնաւոր Ալաշկերտցիք ու Գիւլուեցիք, սակայն դեռ կ'որոշուին 'ի նոսա շատ մը բնական ու բարոյական զանազանութիւններ։

Ալաշկերտցին բնական կազմութեամբ ճերմակ գունով է, դիմք վտիտ բայց վայելուչ նիհարութեամբ և ոչ ցուրտ դեղնութեամբ. մարմնով նուրբ և բարակ, բայց ջղային է և ձիգ. զըլտին պզտիկ և սովորաբար շիկահեր, յօնքն և բիրք աչաց անօք, ուռնաքն պղտիկ և երբեմն տափակ, թէպէտ զըտնուին արծուռնգներ ալ. քիչ մը բերանը լայն. երբ հայերէն կը խօսի՝ միշտ շ գրին ձայնը կը լսուի։ Մտաւոր կարողութեամբ ակար է. քիչերն սովորական բաները սորվելու կը ջանան կամ կը յաջողին։ Բայց արտաքին գործոց մէջ մասնաւոր 'ի տուրևառս՝ շատ աչքաբայ, գործօն և ժիր են։ Երկու խերենէ չկորսնցնելու համար ամեն կարելի քար կը շարժեն. վերջին աստիճանի ճիշտ են։

Փիւլուեցին շատ տարբեր է բնական կազմութեամբ և աւելի հայկական. գունով սևորակ որով սևադէմ, և շատ

անգամ խորթ ու անհարթ երեսք. բնական վտիտ կարծես թէ երկայն հիւանդութենէ նոր ելեր է, բայց մեծ ոսկր, տոկուն և ուժեղ են մարմնով. մեծազուլ սևորակ մազերով, նեղ ճակատ ըստ երկայնութեան, պզտիկ և փայլուն աչքերով (չախալ աչք ըստ նոցա). յօնքն և բիրք աչաց թանձրախիտ, ուռնգն բնական և սովորական, և բերանն պզտիկ։ Ալաշկերտցւոյն համամասնութեամբ փիւլուեցին սաստիկ թաւամաղ է։ Փիւլուեցին բնական, սովորական բայց ոչ ընդհանուր կնիք մ'ալ ունի. քալելու ատեն ոտքին մէկը ծուռ կ'առնէ, անոր համար առած է ճուռ ոտուռի կոչել զնոսա։

Մտք շատ կարող է փիւլուեցին, երկիր մ'է մակութեան կարօտ, բայց մշակելն դժուարին. վառ գի թէ և մտածող միտք ունի, բայց շատ անհարթ և կորդ՝ որով կը դժուարանայ կրթութեան գործը։ Կրօնից տեսական մասին մէջ կեանքն պզտիկ խնդրոյ համար կը նուիրէ, բայց 'ի գործնականին կը կաղայ. ուր Ալաշկերտցին դործնականին մէջ աւելի ճիշդ է, թէպէտ և շատ անգամ դժուար է իմանալ, որովհետեւ քաջ է զամենայն ինչ գեղերեսելու։ Երբ հանդարտ է և խաղաղ փիւլուեցին, շատ անկեղծ է, պարզ է նայուածքն և ամեն շարժումը. բայց երբ կրից մէջ է, սրտտես աչք մը միայն նայուածքէն կրնայ գուշակել աւոր սրտին յուզումը։ Ալաշկերտցւոյն հակառակ փիւլուեցին շոյալ է, ամենին խնայել և ծրարել չի գիտեր. եթէ հարուստ է՝ առատութեամբ կը ծախէ, իսկ եթէ չէ՝ պէտքը և վայելուչը կ'ուզէ ուր որ է։ Առուտուրի մէջ ճիշդ է և աննենդ՝ որով և սաէպ կը խաբուի։

Գիւղակենցաղ կենաց բնականութիւնը ցիւղական արուեստից մէջ ետև

լի երևան կ'ելլան, անոր համար Ռուսաց բաժնի Շիրակացոյն արուեստները նախ քննենք : Մէջերնին տիրող արուեստն՝ մանաւանդ թէ արուեստից պետ և իշխանն՝ երկրագործութիւնն է . ուստի քննենք համառօտիւ նոցա մշակելի երկիրը, մշակելու գործիքները ու կենդանիները :

Պէտք է տեսնալ, գիտել և փորձել Ալակեազու (Արագած) ու Ախուրեան (Արփա-չայ) գետոյն մէջ տեղ արևելեան հիւսիսէն դէպ 'ի արևմուտք տարածուած բլրաշատ դաշտագետնոյն կորդուլիւնը, քարտուլիւնը և ծայրացեալ ջերմութիւնը ու ցրտութիւնը, մէկ մ'ալ դառնալ գիտել եւրոպական կակղահող, անքար և մշակեալ երկիրները, գործեաց դիրութիւնը և ամենայարմարութիւնը, մշակող կենդանեաց կորովութիւնը և ուժեղութիւնը, և որ մեծն է՝ երկրագէտ իմաստնոց խորհուրդը՝ որով մեքենաբար կը գործեն մշակք . և ապա բաղդատել Շիրակացի մշակին անխնայ և ամենահնար ջանքին հետ, զոր կը թափէ յաղթելու ամեն գծով . բմբեր արգելքներու որ ընդ առաջ կ'ելլան, երկիրն վերջին աստիճանի կորդ է 'ի Շիրակ, այնպէս որ քիչ տեղ և այն ալ պարտիցի պէս տեղեր որ կալուղ են՝ բահով կրնան մշակուիլ, որով ցորենի մ'արտ ցանելու համար կենդանոյ պէտք է, ապա թէ ոչ անկարելի է բահով գործ տեսնալ . նոյն իսկ արօրով ալ հերկելու ատեն որչափ խոփեր, քանի առատամիներ, քանի քանի արօրք և լուծք չեն խորտակիր ու փշրիր, և որչափ կենդանիներ կը ֆնաստին ու աշխատութեան չեն գար, փարտութիւնն ալ կորդութեան վրայ գալով՝ կարծես թէ պիտի յուսահատցընէր բոլորովին զերկրագործն . այլ 'ի հակառակէն երկիրն կողմանէ ամենադժուարին արգելքներն խտոր համեմատութիւն ունին երկրագործին ջանիցը հետ . ասոր համար Շիրակացի երկրագործն երբ վարուցանը կ'աւարտէ և ցանածնները կը սկսին կանանչագեղ բողբոջներով

ծածկել և գեղաւորել նոր հերկած երկիրն թխադէմ տեսարանը, ժողովելով իր տանը նորաբողբոջ հասակաւ մանկեր տին՝ կը տանի արտն օգնելու իրենց նման նորատունկ ցորենոյ ծիլերուն, վերցընելով անոնց քովէն աճման արգելիք բարերը, որոնք հնձուելու ժամանակն ալ գերանդեաց շատ ֆնաս կը հասցընեն կամ կոտորելով կամ գուլջընելով . և այն քարերով կը շինուին կարկառներ, զորս տեղացիք խռչ կոչեն կամ քոն, Այս քարաժողով տեսարանս գարնանէ մինչև 'ի ձմեռ երեք անգամ կը բացուի :

Իսկ ջերմութիւն ըսելով կ'իմանանք ոչ միայն բնական երկրին տաքութիւնը, այլ և ստէպ լատահած երաշտութիւնը, որուն գլխաւոր պատճառ տեղւոյն անտառներէ զուրկ ըլլալն է . և այնպիսի սաստիկ երաշտութիւն՝ որ ձիերն անգամ և այծերն ոտքով երկիր փորելով և սուր ակռաներով արմատներ հանելով և ուտելով հազիւ կ'ապրին . իսկ միւս կենդանիները շատ անգամ ապրեցնելու համար ուրիշ երկիր կը փախցընեն : Այս տեղական և բնական պատահարներէն զատ, կան կրկին գիւպուածական պատիժներ ալ, որոց յաճախակի ենթակայ կ'ըլլայ Շիրակ և զրիթէ ողջոյն Հայաստան . մկնահարութիւն հնձոց և հարուած մարախոյ : Երբ ցորենը կարմրեցած հնձուելու մօտ է, ցորենի արտից մէջ շինուած քարալարեկառներու ասկէն անթիւ բազմութիւն մկնաց կ'ելլան և գերեզդիէն առաջ կը սկսին կտրել, թէ որ մշակը չի փութայ . անոր համար Հայաստան կողմեր կան որ խոտհընձի պաքին կամ եղիական պաքին առջի կիրակին Մկան կիրակի կոչեն, որովհետեւ օր մը ջերմեռանդաբար կ'անցընեն, որպէս զի Աստուած մկան պատուհասէն ազատէ իրենց ճակտին քրտիւքը : Մկնահար պատուհասէն զատ կայ մարախոյ հարուածն ալ, զոր իրենք կ'իտուռ կոչեն, որ 25 և գեռ աւելի տարիներէն վերջը մէկ մը կը հանդիպի կ'ըսեն, ինչպէս ազգային պատմութեան վերջին

շրջանին մէջ կը յիշուի շատ անգամ։ Երկրագործութեան հասարակ ու սովորական գործիքն 'ի Շիրակ արօրն է, զոր ռամկական անիքերական լեզուն հիօթ կ'անուանէ։ Այս գործւոյն էական մասը վիզն է՝ որ ռամկօրէն պողազ կոչի, բայց միւս մասերն ալ կա, բնորք են, ինչպէս առատաւն կամ ռատաւն, բուշն, խոփն և մւձն. իսկ երկրորդաբար կարեւորքն են փոկ, կանդիրիւ, ռարկադ, և այլն։

Պօլաւն երկայն փայտ մ'է, որոյ վրայ կը հաստատուին բոլոր միւս մասերն։ Առատաւն արօրին հողին մէջ մտնող մասն է, պողազին հետ կցուած թուրին և մաճին միջոցով, որոյ վրայ որածայր և նոյնաձև երկթիղ երկաթ մ'ազուցած է, զոր խոփ կը կոչեն։ Թուշն քառաթիղ երկայնութեամբ, թիղ մը լայնութեամբ և քառամաստն հաստութեամբ տախտակ մ'է, որ կ'անցընի առատամի և պողազի մէջ ու զանոնք իրարու հետ կը կապէ։ Մաճն պողազի առատամին մէջ մտած միջոցին վրայ տնկուած ուղիղ փայտն կամ գուռազանն է, որոյ ծայրին վրայ բռնելու փայտիկ մ'ալ կայ մաճքառ կուլուած՝ ուսկից կը բռնէ մաճակաւն կամ մաճըղունն՝ արօրը ուղիւղ համար. և երբեմն ալ կորդ տեղերն երկու ուղիւղ մաճը բռնած կը կենայ արօրին վերջին ծայրին վրայ, որպէս զի արօրն երկրին խորը մտնայ։

Արօրը կը ձգեն մէկ կամ երկու լուծք եզանց. եթէ մէկ լուծ եղով է՝ աւնոյ կ'ըսուի, եթէ կրկին՝ առաջին լուծն աւնոյ և երկրորդն հօրիք. իսկ վարդազ առաջինն մաճըղուն կամ մաճակալ կոչուածն, երկրորդն հօտաւոյ։ Հօրիքն օգնական ընելու և աւնոյին հետ կապելու համար արօրին պողազին վրայ պզտիկ փայտ մ'ազուցած է որ հաւուն կոչուի. ասկէ շղթայ կամ փոկ մը կը ձգուի որ կ'երթայ աւնոյի լուծին տակէն բոլորչի փայտէ շրջանու, կի մը միջէն կ'անցնի և կը հասնի կը կապուի հօրիքին վրայ։ Այս փայտէ շրջանակն ռարկադ կ'ըսուի. իսկ աւելի

պզտիկ շրջանակ մը նոյնպէս փայտէ որ պողազն կը կապէ փոկով աւնոյ լծին վրայ՝ կոչուի կանդիրիւ։

Այս գործիքն առ հասարակ ամեն մէկ օրավար ունեցող գեղացին ալ ունի, ինչպէս եւրոպացի աղքատ գեղացին իր բահը։ Բայց գոյքաւ կոչուած մեծ արօրն ամենքը չեն կրնար ունենալ գործածելու միջոցաց սղութեան և պակսութեան պատճառաւ։ Գուլթանը եւրոպական արօրն է, բայց անոր մեծն. ունի առ ալ իր առատամը, թուրը, մաճը և խոփը, բայց տարբեր ձևերով։ Մաճն կրկին առ 'ի չել փայտէ կը ձևանայ, որոնք զազաթնահալեաց կողմէն կը միանան իրարու հետ մաճքառ կոչուած փայտով ճիշդ եւրոպացւոյ մաճին նման։ Մեծ տախտակ մը գրեթէ կէս մեղր լայնութեամբ և մի մեղր երկայնութեամբ հաստատուած կայ մաճին և առատամին վրայ, որոյ պաշտօնն է ձևիւն պատուած և խոփին կորած երկիրը շրջել, դարձնել ու երկրին ներքին երեսը վերին ընել. և այս կորուած երկիրն չնի կամ ռարք կոչուի։ Այս հողակոչու ախօսն որ շարունակ գութանի ընթացքին հետ կը բացուի, գրեթէ մէկ մեղր խորութիւն և աւելի լայնութիւն կ'ունենայ։ Զևիչն ալ երկաթի գաւազանի ձևով երկաթ մ'է բարձր ու սրածայր, որ պողազի միջէն կ'անցնի թրին նման և կ'իջնայ ուղղակի խոփին դիմաց, և երկիրը պատռելով կ'առաջնորդէ ու կը դիւրացնէ խոփին, անոր համար ալ ձևիւ կոչի։ Այս գութանին իրանն է բուն կարեւոր մասն. բայց դիւրին քաշելու համար պէտք կայ գեռ ուրիշ գործեաց։ Այդ մեծիւրան մարմինը կը յեցընեն երկու անուոց վրայ՝ որոնք կը հազորդին իրարու հետ աւնիով մը, որ չիտակ փայտ մ'է որուն երկու առանցիղ վրայ կը դառնան անիւքն, որոց մէկը մեծ կ'ընտ (անիւ) կոչեն, միւսն ւնուիկ, որ միշտ ստիպեալ է նոր փորուած ախօսին միջէն ընթանալ ախանջ խայթող եղանակաւ մը ճռնելով։ Այս անիւներն իրենց ստնիով

կը քաշուին կամ կ'երթան կը միանան առաջին լուծ եղան հետ ուղիղ սանդղ-
ղաձև փայտով մը՝ որ խառաղան կոչի-
իսկ գուլթանին իրանն անուող վրայ
կապող շղթան ալ ձաւնպարակ։ 40
մեզը երկայնութեամբ շղթայ մը՝ որոյ
ծայրը պողպտին վրայ կը հաստատուի
կռռան կոչուած փայտով մը՝ կ'ըսուի
քնատաւ։ շղթային երկայնութեամբ կը
լծեն 12 լուծ եզ, կամ խտուն եզ կոմէշ-
երկու լուծն եզանց մէկ տուն կոչուի,
որովհետեւ մէկ մարդէ կ'ուղղուին, ո-
րով վեց տուն են բոլոր գուլթանին քա-
շող անասունը, և իւրաքանչիւր տան
զանազան անուն կու տան։ Առաջին
տունն որ խարաղանին ծայրէն կը սկը-
սի՝ ամով կամ խառաղանաւուն կոչուի-
երկրորդն խնձորտուն, ուժով զեղե-
ցիկ եղնը կամ գոմէշներ հօն լծուե-
լուն համար. երրորդն մուշտաւունն որ
տկար և վտիտներուն տեղն է, չորրորդն
փոշեւուն, հինգերորդն չարխաձի կամ
չախաձի. վեցերորդն չկրցայ յիշել,
փոքրիկ փայտ մը որ զլուծը փոկով
մէկտեղ կ'արգելու պողպտին վրայ՝ կո-
չուի գործնաւոր։

Հերկելէն վերջը հերկածը հարթե-
լու համար կը գործածեն մանկեւ ը-
սուած գործին, որ 5 մեզը երկայնու-
թեամբ գերան մ'է, որոյ գետին դրա-
շէի կողմը 2 թիղ երկայնութեամբ 40 ի-
շափ փայտէ ակուանի շարուած կան-
այս գործին գուլթանի հանած կոշտերն
կը փխրէ և փոքրիկ ակօսներ կը բա-
նայ՝ ցորենը սերմանելու համար։ Իսկ
արօրի հերկածը կամ գուլթանի մանկե-
սով հերկած արտը հարթելու համար
կը գործածուի տալփաւ կամ ցալք, որ
մանկեւի երկայնութեամբ զուգահե-
ռական երկու փայտերու վրայ ցալք-
աւելի ծառաճիւղով հիւսուած միծ
աւել մ'է, յոր չորս եզինք լծուած՝ ա-
րօրին կամ մանկեւին փորած ակօսե-
րը կը հարթեն՝ ծածկելով միտնգամայն
զցորեանն։

Երկու տեսակ ցանեւու երկիր կայ,
ոստի՝ որ անձրեւով միայն կը շատա-

նայ և ջրեմն անհնարին է, և շուրթի՝
կամ ըստ տեղւոյն բարբառոյ ջրովի,
որ քիչ անձրեւով չի շատանար, այլ
ջուր ալ կ'ուզէ, և ջրեմն ալ կարելի է՝
արան ջրի մօտ գտնուելով։ Ջրովի ար-
տերն երբ սկսին բողբոջիլ՝ տակաւին
ցօղունը չհաստեցած՝ մշակը փոյթ կը
տանի ակօսներով ածու ածու պատ-
րաստել ջրելի արտը. կորածն փայտ մը
որ կոչուիւնդ (կորի, առու, փողրակ
պեղել) կոչուի՝ արօրին բերանը կը դը-
նեն, և անով առանց շատ վնասելու
նորաբողբոջ արմըտեայ՝ ակօսներ կը
բանան։

Մինչև հիմա վարեցիկը, ցանեցիկը
սերմանեցիկը ու ցալքեցիկը. հիմա
քաղիկը, կրեմը, բերեմը ու ծեծելով
արդիւնքը ժողովեմը։

Եթէ տարին անձրեւային եղած է,
քաղն գերանդիով կ'ըլլայ. արմատքն
երկայնահասակ ու առատ ըլլալուն՝ չեն
խնայեր խոզանն քիչ մ'երկայն թող-
լու, և քիչ մ'ալ ցորեան երկրին վրայ
թռչնոց համար. վասն զի գերանդին
ցնցելով զցորեանն՝ կը թափէ հաւկին
միջէն։ Մանգաղն այս մասամբ շատ
շահաւոր է. անոր համար չորային տա-
րիներ կը գործածեն և կարճահասակ
արմըտեայ միայն։ Գերանդաւորն քա-
ղելով կը յառաջէ՝ ձգելով իր ետեւէն
հաստ կամ բարակ կարգ մ'օրանի.
զոր լաւ կը կոչեն. գերանդաւորի և
տեւէն կ'ընթանայ կապարն, որոյ ձեռ-
քը մանգաղաձև փայտէ գործի մը կայ
պսակալի կոչուած, և անով կը ժողովէ
զբաղուած որայն գրկին դիմաց՝ ամ-
փոփել չկարենալու չափ, և այն ատեն
ժողովածը որ խորում կ'ըսուի, կը դնէ
կեւ անուանած կապոցի մը վրայ, և
ուրիշ նմանօրինակ գիրկ մ'որայ ալ ժո-
ղովելով՝ խորսը կը շինէ և կը կա-
պէ։ Այս կապոցները կարգաւ գի-
ղելով արտին մէջ՝ թաղը կը կոչեն, որ
30 խորձէ կը բաղկանայ. իսկ եթէ
ուզեն առանց խորձ կապելու ձեւով
մը խորումներ շինել առանց կապի
կարօտելոյ, և գիղել քիչ մը տարբեր

կերպով, յայնժամ այս կերպով գիշածն եղևն կը կոչուի: Կապուրի ետևէն կը քալէ փոցխաւառն, կամ ծանօթ բառով ըսենք՝ սանտրաւորն, որ կապուրի գետին թորուցած որայն հետ զհետէ կը ժողովէ ու կապուրի դիմացը կը դնէ որպէս զի զանոնք ալ կապէ: Եթէ գերանդաւորքն շատ ըլլան, կապուորքն ալ շատ պէտք են ըլլալ և հետեւաբար փոցխաւորքն ալ: Բարդերն ժամանակ մը կը մնան արտին մէջ չորնալու, թէպէտ և կարօտութիւն չունենան առայն, մինչև որ գեղացին բոլորովին դադրի քաղցէն և սկսի կալի մէջ ժողովել քաղածները: Որայն մանրելու գործիքներէն առաջ՝ արժան համարինք նախ համառօտ մ'այն գործւոյն նկարագիրն տալ, որով զորայն բառնալով՝ կալը կը հաւաքեն, և այս է աչայն:

Հայաստանի սայլն ամենեւին անըմամբ է եւրոպականին. կը բաղկանայ երկու առեղէ, որոց ծայրն իրարու հետ պընդապէս կը հաղորդին փոքր փայտով մը սկիւնակաւնէ կոչուած. առեղներու վրայի եղածներն բոլոր մէկ տեղ առնելով թաւք կ'ըսուին: Թաւքը զործածելու համար կը յեցընեն երկու անուոց վրայ. և սոնիին վրայ հանգչեցընելու՝ առեղներուն գետնի կողմն եղած մասին երկու կողմէն մէկմէկ փայտ կը դնեն շարձ անուշով, և այս բարձրուն երկու ծայրէն մէկմէկ ալ փայտիկ ցցուած՝ ալիքայ անուանակոչութեամբ. որոց մէջ կ'արգիլուի սոնին, որպէս զի առանց դուրս փախչելու անիւներն թաւայեցնէ. ոչ թէ անիւն սոնիին վրայ կը թաւայի, ինչպէս Եւրոպացւոց սայլերուն վրայ կ'երևնայ, այլ սոնին կը դառնայ բարձին վրայ և ակռանքուն մէջ, և անիւներն ալ իր հետը կը թաւալէ: Առեղէ առեղ կարգաւ տալն տակներ ձգուած կան, որոց առաջինը և վերջինը կոչի կը կոչուին. այս կոփերուն ծայրից վրայ կ'ամբառնան չորս սրածայր փայտեր սքրայ կոչուած. սայլին թամբին երկայնութեամբ սքրայի՝ ի սքրայ կը ձգուին կրկին յոկուած

փայտեր՝ զորոնք թաւ կ'անուանեն. Այս սայլի անիւներն և գրեթէ բոլոր սայլն կազմի ամուր փայտէ կը շինուին զօտարարառնալի ծանրութեամբ. անիւներն կամ կ'ունենան չորս մատ և աւելի հաստութիւն ունին և երկմատն են, որոնք կը զուգին իրարու հետ մեծ երկաթի շրջանակով մը. այսպէս ծանրութիւն ծանրութեան վրայ աւելցընելով՝ անտանելի կ'ընեն բեռնակիր անասնոց. և որ մեծն է, երկաթէ շրջանակը շատ անգամ աղէկ չփակցընելով անուոց շրջանակին, ճանապարհորդութեան միջոց վար կ'ընկնայ և արգելք կ'ըլլայ յառաջելու ընդ ճանապարհորդակիցս և մեծամեծ փառնքի առիթ: Այս սայլով Շիրակացին կ'երթայ Թիֆլիզ, Երևան, Էջմիածին, Ախալցխէ, Կողբ, Ղարս, և այլն, և կըրնանք կարծել որ եթէ իտալական սոսկալիթիսար և գոմէշանման եղներն ըլլային ի Շիրակ, իրենց բնական և տեղական անհոգ դանդաղ ընթացքովն բան մ'ալ չէին կրնար ընել այն ծանրութեան տակ, այն քարայրց և անհարթ ճամբաներու մէջ: Սոյն սայլով դարձեալ Շիրակացի գեղացին իր քաղած որայն յարտէն ի կալն կը փոխադրէ, բայց յայսմ մասին շատ փաստով կ'ըլլայ. վասն զի մեծ դէզ մ'որայ բառնալով սայլին վրայ և ամուր կերպով մ'ալ չկապելով դէզը չորս կողմէն, և հասարակաց ճամբուն զփաղդ քարոտութեամբ՝ շատ մ'որայ վար կը թափին, այնպէս որ քաղելէն վերջը որաները կրելու միջոց՝ հասարակաց ճամբաներն ցորենով կարմրացած կը գտնես, և կենդանիներն ցորեն ուտելով կ'երթան կու գան առաւօտ և երեկուն: Ուրայի բարդերը բերելով կալը՝ կը խառնեն իրարու հետ և մէկտեղ մեծ դէզ մը կը կազմեն, և անիւ կամաց կամաց 6 բարդ կամ նուազ և աւելի ալ առնելով կը սկսին ծեծել:

Կալն սովորաբար բոլորչի ագարակ մ'է շրջապատած կամ մացառներով կամ աւելի սովորական կիսատ պատով

մը . իր տրեմոտեան կողմն է միշտ մնալագն , որոյ մեծ պատուհանն կ'ընկնայ անմիջապէս բոլորակին պատին վրայ , ուսկից յարդը ցորենէն բաժնած ներս կը տեղաւորեն : Որայն կը ծեծեն կաւով կամ կաւմնաւալով : Կամն մեծ և հաստ տախտակ մ'է , միաձոյլ կամ երկմասն և սրածայր կ'աւարտի . այն կողմն որ որային վրայ պիտի ընկնայ , խիտ խիտ գայլախաղի սրածայր կոտրուանք դամուած կան , զորոնք կաւքաւը կ'անուանեն . զայս կամն կը ձգեն լուծ մի եզ , և միշտ վրան մարդ կամ ծանրութիւն մը պիտի դռնուի՝ որպէս զի մանրին , և միշտ գայլախաղէ ախուաներն մանրելի նիւթին վրայ չշափէ : Իսկ կամնասայն խզարի նման սոյլակ մ'է . վարի մասին վրայ առանցքին վրայ զարձող դաւազաններ կան , որոնք շատ մը սուր ուրագներ կը կրեն , և վերի մասն ծածկուած է տախտակով , որոյ վրայ կը նստին եղներ վարողներն . այս գործին կը գործածուի միայն որայի խոշորութիւնը կոտրելու , և աւելի մանրելու չի գար : Հայաստանի յարդը շատ մօտն է և խիլ խիլ եղած : Ծեծելու ատեն բնականապէս օրն երկու անգամ կը դարձնեն ծեծողքն արեւ չտեսած կողմը գէպ 'ի արեւ , զոր կալ շրջել կ'ըսեն . այս կ'ըլլայ մինչդեռ խոշոր է որայն երկմասո գործիով , ապա եռամաստով և հորսելիով . բառէն ու շէնքէն կ'ենթագրուի գործւոյն ինչպէս ըլլալը . վերջին գործւոյն անունն իր պայտօնէն է , վասն զի յարդ եղած որայն կը հոսէ հողմոյն դիմաց՝ որպէս զի բաժնուի ցորեանն . կայ ուրիշ երկմաստ մ'ալ կամ եռամաստ՝ եղան կոյմամբ , չորս մեղր բարձրութեամբ , որոյ ծայրը բնական և ոչ արուեստական կերպով 2 , 3 , 4 մաս ունի և կը գործա-

ծուի խորձերը կամ խորոմները բարձր տեղեր հանելու՝ որպէս զի դիզեն : Որայն մանրելով այն կէտը հասնելէն վերջը՝ որ հարկ կ'ըլլայ կալը քիով կամ քիակալ շրջելու՝ կը քեղեն , որ է ըսել մանրած , յարդ եղած որայն կը ժողովեն և քեղ կը ձևացնեն : Եւ կը սպասեն վնկոյ կոչուած արեւելեան հողմոյն , որ սովորաբար գիշեր ատեն կը սկսի փչել , որպէս զի երեւն յարդը . որ է ըսել , հողմոյն տալով կանոնաւոր կերպով մը իրենց հորսելիներով յարդը բաժնեն ցորենէն : Երբ յարդն կը զատուի ցորենէն , վերջինը փակեմաղով կամ այն պիտի մաղով որ գցորենը միայն անցընէ և մնացած չմանրուած հասկերն ու յարդն արգելու , զորոնք խզգ , խզոզգ (անշուշտ խճոզճ) կը կոչեն , և ամբողջ որային հետ մէկտեղ հաւաքելով , կաշուկոշտէն լմնալէն վերջը՝ կը մանրեն և մնացած ցորենը կը հանեն միջէն :

Ծաբրուած ու զատուած ցորենն ուրիշ մաղէ մ'ալ անցընելով , որ քարմաղ կ'ըսուի , կը հանեն անոր միջէն մանր խիճերն որ կալի գեանէն կը խառնուին ցորենին հետ և օտար սերմուկներն , վարսակի սերմանց նման սև հատիկներ , զոր ձրլլլլկ կ'անուանեն և ամենը մէկտեղ կոշտ , վասն զի հաւուց կը գործածեն : Ասկէ վերջը ապահով կրնայ շտեմարանուիլ ցորեանն , և կը շտեմարանեն սովորաբար ջրհորներու նման հորերու մէջ , չորս կողմն յարդով կամ խոտով պատապարելով , և այս պատըս պարելու կերպն կոչոյր կամ կոչոյր դնել կը կոչուի :

Ասկէ վերջը պիտի տեսնանք ցորեան աղալու գործարանն կամ ջաղացն , և ընտանեկան հաց եփելու կերպն ու գործարանքը :

Կը շարունակուի :

